

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/5

17 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ասատուր Թովմասյանի 22.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 190 որոշման դեմ:

Ասատուր Թովմասյանի գանգատում բերված փաստարկները.

Ասատուր Թովմասյանը տեղեկացնում է, որ իր տղան մոտ մեկ տարի է ինչ գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում և պարզ չէ, թե երբ է վերադառնալու:

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 190 որոշման և նախնական հաշվարկի վերաբերյալ գանգատաբերը նշում է, որ համաձայն չէ դրանցում տեղ գտած տվյալների հետ, քանի որ խնդրո առարկա մեքենան վաճառվել է ոչ թե 800.000 դրամով, այլ՝ 300.000 դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է կատարել գանձման առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ ՀՀ ճանապարհային ոստիկանությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ քաղաքացի Արտավազ Ասատուրի Թովմասյանը 02.09.2014 թ-ին և 29.10.2014 թ-ին վաճառել է սեփականության իրավունքով իրեն պատկանող համապատասխանաբար «Toyota Camry 2.4» և «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենաները: Մասնավորապես, Արտավազ Թովմասյանի կողմից 02.09.2014 թ-ին վաճառվել է «Toyota Camry 2.4» մակնիշի ավտոմեքենան: Այնուհետև 29.10.2014 թ-ին վաճառել է «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենան, որը ձեռք է բերել 17.05.2014 թ-ին: Նշված փաստական հանգամանքներից հետևում է, որ Արտավազ Թովմասյանի կողմից 29.10.2014 թ-ին «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը համարվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարում և ենթակա է հարկման ավելացված արժեքի հարկով: Արդյունքում, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 կետի բ) ենթակետի, 8-րդ հոդվածի 6-րդ կետի, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների դրույթներով Մաշտոցի ՀՏ կողմից 25.08.2015 թ-ին կազմվել է հարկային պարտավորությունների վերաբերյալ նախնական հաշվարկը, որի համաձայն Արտավազ Թովմասյանի ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունը կազմում է ընդամենը 269.721 դրամ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Արտավազ Թովմասյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 25.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են ընդամենը 269.721 դրամ: Արդյունքում ղեկավարվելով «Հարկերի

մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 190 որոշումը քաղաքացի Արտավազը Թովմասյանից 269.721 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Արտավազը Թովմասյանի կողմից 29.10.2014 թ-ին «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը համարվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարում և ենթակա է հարկման ավելացված արժեքի հարկով, քանի որ 2014 թ-ի ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Ինչ վերաբերվում է ավելացված արժեքի հարկի գումարի չափը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգով որոշելուն, ապա Հանձնաժողովը գտնում է, որ հաշվի առնելով հիշատակված «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենայի վերաբերյալ ներկայացված տեղեկությունները, տվյալ դեպքում, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դրույթները կիրառելի չեն:

Հանձնաժողովի համոզմամբ, «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենայի օտարման գործարքից ավելացված արժեքի հարկը հաշվարկելիս անհրաժեշտ է հիմք ընդունել այդ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրում արտացոլված գործարքի գինը, որը ՀՀ ճանապարհային ոստիկանությունից ստացված տեղեկությունների համաձայն կազմում է 300.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 190 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Մասնավորապես, Արտավազը Թովմասյանի ԱԱՀ-ի գծով պարտավորությունները հաշվարկելիս անհրաժեշտ է հիմք ընդունել «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրում արտացոլված գործարքի գինը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 190 որոշումը:

2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին կայացնել Արտավազը Թովմասյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին նոր որոշում՝ ԱԱՀ-ի գծով պարտավորությունները հաշվարկելիս հիմք ընդունելով «Opel Vectra 1.8» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրում արտացոլված գործարքի գինը:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

